**«ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի Քարաբերդի հանքավայրի կենտրոնական տեղամասի արդյունահանման ժամկետի երկարաձգման ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ հանրային չորրորդ լսման ժամանակ բարձացված հարցերի ամփոփաթերթ**

| Հարց, դիտողություն, առաջարկություն | Պարզաբանում |
|---|---|
| Կապված՝ հանքավայրի շահագործման ժամկետի երկարաձգման կամ հանքավայրի ընդլայնման հետ: | Հանքավայրի ընդլայնում չի նախատեսվում քանի որ հայցվող տարածքը ստորգետնյա արդյունահանման համար արդեն տրամադրված է եղել ՝ տարեկան 29673.1 տ հանքաքար արդյունահանելու իրավունքով: |
| Ստորգետնյա շահագործումը հետևանքներ | ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված են հանքի շահագործման ընթացքում և արդյունքում ակնկալվող ռիսկերը, և դրանց մեղմմանը կամ բացառմանն ուղղված բոլոր հնարավոր միջոցառումները: |
| Վանաձոր քաղաքի ազդակիր ճանաչվելու հանգամանքը | Վանաձոր քաղաքը ազդակիր չի ճանաչվել քանի որ այն հանքավայրի հեռու է ավելի քան 3 կմ: |
| Տվյալ հանքավայրում ուրանի պաշարների առկայության վերաբերյալ | Նշված շրջանում չկան ուրանի հաստատված պաշարներ, ինչի մասին հարցատուն ևս նշեց որ ներկայացվել է բացառող գրություն: |
| Փոշու և աղմուկի հետ կապված մտավախություններ | Հանքավայրի փակ լինելն արդեն իսկ վկայում է նշված երևույթների հնարավորին նվազ ազդեցության մասին: Սակայն նույնիսկ այս պարագայում նախատեսվծ են բնապահպանական կառավարման պլանով նախատեսված կանխարգելիչ միջոցառումներ: |
| Զբոսաշրջային կլաստեռների հետ կապված | Քանի որ հանքավայրը արդեն իսկ գոյություն ունեցող է, հետևաբար այն չի կարող ապագա ծրագրերին խոչնդոտել: |
| Ռեկուլտիվացիոն աշխատանքների վերաբերյալ | Ռեկուլտիվացիոն աշխատանքներ նախագծով սահմանված են և վերջնական նախագիծը փորձաքննության կներկայացվի հանքի փակումից 2 տարի առաջ: |